




**ՕԼԻՄՊԻԱԴԱ 2019  
ՄԻՋՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՒԼ  
ՔԻՍԻԱ**



**9-րդ դասարան**

**Խնդիր 1.**

1	2	3	4	5	Ըստհանուր միավորները
1	1	1	1	1	5


**Հետևյալ սխեմայում ներկայացված են X նյութի փոխարկումները:** **Առաջարկենք** X նույթի բանաձեռք և գրեք ուշակցիաների հավասարումները:

- 1)  $X + O_2(A + \dots)$
- 2)  $X + A(B + \dots)$
- 3)  $X + Br_2(B + \dots)$
- 4)  $B + H_2SO_3(A + \dots)$
- 5)  $X + H_2SO_3(B + \dots)$

**Խնդիր 2.**

1	2	3	4	5	6	Ըստհանուր միավորները
2	2	2	2	2	2	14

**Գրեք հետևյալ ուրվագրին համապատասխան ուշակցիաների հավասարումները:**




**Որոշեք A, B, C, D, E, F և G տառերով ծածկագրված նյութերի բանաձեռքը:**

**Խնդիր 3.** 85,55 զանգվածով Ա սպիտակ փոշին լցրել են բաժակի մեջ և վրան ավելացրել 20%-անոց աղաթքու (ավելցուկով), ինչի հետեանքով փոշին ամրողությամբ լուծվել է: Փոխազդեցության հետեանքով անջատվել է այրման չնպաստող, ըստ հելիումի 11-ի հավասար խտությամբ 13,44 լ Բ զազր, և գոյացել է թափանցիկ լուծույթ: Վերջինիս վրա նատրիումի սուլֆատի լուծույթ ավելացնելիս (ավելցուկով) անջատվել է 46,68 գ Գ նյութի սպիտակ նստվածքը: Ածխի հետ վերջինիս շիկացման արդյունքում գոյացել է սպիտակ Դ նյութը: Վերջինս աղաթքվով մշակելիս անջատվել է 4,48 լ անդուր հոտով, այրվող Ե զազր, որի խտությունն ըստ օդի 1, 17 է: Եթե Ա փոշին լվացվի ջրով, ապա դրա զանգվածը կփոքրանա 31,80 գրամով: Ջրում չլուծված մնացորդի վրա աղաթքվով ազդելիս անջատվում է 6,72 լ Բ զազր: Գազերի ծավալները վերաբերում են նորմայ պայմանների:

- Ի՞նչ բաղադրություն ունի Ա փոշին:
  - Որոնք են F և E զագերը:
  - Ո՞րն է Գ նյութը:
  - Գրեք բոլոր ռեակցիաների հավասարումները:

**Խնդիր 4.** Տրված է փոխարկումների հետևյալ ուրվագիրը



1. Որոշե՞ք անհայտ  $X$  և  $Y$  նյութերը, եթե հայտնի է, որ  $X$  նյութում քրոմի օքսիդացման աստիճանը  $+6$  է, զանգվածային բաժինը՝  $26,804\%$ , իսկ  $Y$  նյութում՝  $+3$  և  $50,485\%$  համապատասխանաբար: /1 միավոր/
  2. Գրե՞ք համապատասխան ռեակցիաների հավասարումները: 1-ին և 6-րդ ռեակցիաներին մասնակցում է զազային քլորը՝ լուծված հիմնային միջավայրում, իսկ 3-րդ ռեակցիայի ելանյութերից է ծծմբի ամենակայուն օքսիդը: /3 միավոր/